3

Միասնական կազմով առաջին խորհրդակցությունը

4

ՏԿԱԻ նախարարը հանդիպել է աշակերտների հետ

5

Պատրաստ են աղետներին դիմակայելու

7

Երկրաշարժ Ղրիմում

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ISSN 1829-149X

ով իրազեկված է, նա պաշտպանված է
արտակարգ թերթ

N 43 (552) 12.12.2014 - 18.12.2014 www.mes.am

ՏԿԱԻ նախարարի աշխատանքային այցն Արագածոտնի մարզ
Ուշադրության կենտրոնում երեխաներն են

Դեկտեմբերի 10-ին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը աշխատանքային այցով Արագածոտնի մարզում էր: Արմեն Երիցյանի առաջին կանգառն Ապարան քաղաքում էր, որտեղ նախարարն այցելեց քաղաքի երեք մանկապարտեզ:

Շրջելով մանկապարտեզների տարածքում՝ ՏԿԱԻ նախարարը ծանոթացավ առկա պայմաններին, զրուցեց մանկավարժների հետ և լսեց նրանց հուզող խնդիրներն ու մտահոգությունները:

Նախարարը կարևորեց երեխաների համար լավագույն պայմանների ապահովումը նախակրթական ուսումնական հաստատություններում, շեշտեց հատկապես ձմռան ամիսներին անխափան ջեռուցման ապահովման անհրաժեշտությունը:

Ջեռուցման խնդիր կար նաև Ապարանի դպրոցներից մեկում, որի պատճառով մարմնամարզության դասերը անցկացվում են սահմանված գրաֆիկի խախտումներով: Նախարար Երիցյանն առկա խնդիրների լուծման վերաբերյալ համապատասխան ցուցումներ տվեց:

Այցի շրջանակներում Արագածոտնի մարզպետարանի դահլիճում Արմեն Երիցյանը խորհրդակցություն անցկացրեց մարզպետարանի աշխատակազմի, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և աշխատակիցների հետ: Նախարարը նշեց, որ տեղական ինքնակառավարման ոլորտում կան բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում են հետևողական և նպատակասլաց աշխատանք: Արմեն Երիցյանն իր խոսքում հավելեց, որ Արագածոտնի մարզը հարազատ է իր համար, քանի որ երկար տարիներ մարզում աշխատել է որպես ոստիկան, ծանոթ է մարզում առկա խնդիրներին:

Նախարարն ընդգծեց, որ մեկ առ մեկ այցելելու է բոլոր համայնքները՝ առկա խնդիրներին տեղում ծանոթանալու նպատակով: Արմեն Երիցյանը կոչ արեց համայնքների հետ միասնական աշխատանք կատարել, որպեսզի հնարավոր լինի համատեղ ջանքերով կերտել տարածքային կառավարման հզոր համակարգ:

Շտապօգնության մեքենաներ՝ սահմանամերձ համայնքներին

Դեկտեմբերի 11-ին ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունում տեղի ունեցավ ՀՀ առողջապահության նախարարության կողմից վերանորոգված շտապօգնության մեքենաների ցուցադրությունը, որին ներկա էին ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը, առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը եւ ՀՀ մարզպետներ:

Նախարարներն ու մարզպետները տեղում ծանոթացան շտապօգնության վերանորոգված ավտոմեքենաների տեխնիկական վիճակին եւ հագեցվածությանը:

Համաշխարհային բանկի հետ համատեղ իրականացված ծրագրի շրջանակներում «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կողմից տրամադրված 10 «ԳԱԶ-32214» մակնիշի հին շտապօգնության մեքենաները վերանորոգվել եւ տրամադրվել են մարզային բժշկական հաստատություններին: Այդ հաստատություններն ընտրելիս առաջնահերթ հաշվի են առնվել տվյալ համայնքի սահմանամերձ լինելու հանգամանքը եւ բուժհաստատության կարիքները՝ առկա տրանսպորտային միջոցների մաշվածության աստիճանը, սպասարկվող բնակչությունը, հեռավորությունը մարզկենտրոնից եւ այլն:

Պատասխանելով լրագրողների հարցերին՝ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը նշեց, որ մարզերին օժանդակելու հարցում շատ կարեւոր է նախարարությունների միջեւ համագործակցությունը: «ՀՀ վարչապետի հանձնարարությամբ այս վերանորոգված 10 մեքենաները կմեկնեն սահմանամերձ համայնքներ, որտեղ այսօր զգացվում է դրանց անհրաժեշտությունը: Շտապօգնության մեքենաների կարիք առկա է գրեթե բոլոր մարզերում, ուստի, կարծում եմ, նման ծրագրերը պետք է շարունակական լինեն»,- նշեց նախարար Երիցյանը:

Առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը նշեց, որ վերանորոգված մեքենաներից 4-ը կտրամադրվեն Տավուշի մարզի համայնքներին, 2-ական մեքենա կուղարկվի Արարատի ու Լոռու եւ մեկական մեքենա՝ Շիրակի ու Արմավիրի մարզեր: «Այս մեքենաներն ամբողջությամբ վերանորոգվել են, ինչպես նաեւ հագեցվել որոշակի բժշկական պարագաներով ու դեղորայքով: Ընդհանուր առմամբ ծրագրի արժեքը կազմել է մոտ 20 միլիոն դրամ», - ավելացրեց Ա. Մուրադյանը:

քրոնիկոն ԱԴԱԴ

ԱԻՆ
միացյալ հեռախոսահամարն է
911

Ավտոմեքենաները դուրս են բերվել արգելափակումից

Դեկտեմբերի 11-ին, ժամը 9.33-ին ահազանգ է ստացվել, որ Սոթք-Քարվաճառ ավտոճանապարհին «ԳԱԶել» մակնիշի բեռնատար ավտոմեքենան մերկասառույցի պատճառով արգելափակվել է եւ չի կարողանում շարունակել ընթացքը. դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրշեջ-փրկարարները արգելափակումից դուրս են բերել «Օպել» մակնիշի (վարորդ Հ. Պ.) 34 ZQ 399 պետհամարանիշի, «ԳԱԶել» մակնիշի (վարորդ Խ. Կ.) 35 UP 314 պետհամարանիշի, «ՎԱԶ-2121» մակնիշի (վարորդ Ա. Գ.) 26 LS 299 պետհամարանիշի եւ «ԿամԱԶ» մակնիշի (վարորդ Վ. Հ.) 46 LD 444 պետհամարանիշի ավտոմեքենաները:

Այրվել է անասնագոմի տանիք

Դեկտեմբերի 11-ին, ժամը 2.31-ին ահազանգ է ստացվել, որ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի միկրոշրջանի թիվ 57 շենքի մոտակայքում գտնվող սեփական տան բակում այրվում է խոտի դեզ:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 2.42-ին, մարվել՝ 3.45-ին: Ջրառատ փողոցում այրվել է անասնագոմի տանիք՝ 70 քմ:

ՃՏՊ Մ-3 միջպետական ավտոճանապարհին

Դեկտեմբերի 10-ին, ժամը 20.08-ին ահազանգ է ստացվել, որ Մ-3 միջպետական ավտոճանապարհի Վանաձոր-Սպիտակ հատվածում տեղի է ունեցել ՃՏՊ, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ Մ-3 միջպետական ավտոճանապարհի Սպիտակ-Վանաձոր հատվածում (9-րդ կմ) բախվել են «Ֆորդ տրանզիտ» մակնիշի 35 UV 925 եւ «Սեատ» մակնիշի 35 ST 397 պետհամարանիշերով ավտոմեքենաները, ինչի հետեւանքով «Սեատ» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ 1978 թ. ծնված Ա. Ա.-ն տեղում մահացել է, իսկ ուղեւոր՝ 1988 թ. ծնված Կ. Վ.-ն, ստանալով տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, արգելափակվել է ավտոմեքենայում: Վերջինիս հրշեջ-փրկարարները դուրս են բերել ավտոմեքենայից, ով հոսպիտալացվել է «Սպիտակ» ԲԿ:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են ծանր: Ժամը 20.35-ին հրշեջ-փրկարարները ավտոմեքենայից դուրս են բերել վարորդի դին, այնուհետեւ հոսանքազրկել եւ գազազրկել են ավտոմեքենաները:

Առկա է փլուզման վտանգ

Դեկտեմբերի 9-ին, ժամը 14.15-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Ռուսթավելու փողոցի տներից մեկի մոտակայքում գտնվող պարիսպը (երկարությունը՝ 30 մ, բարձրությունը՝ 6 մ) գտնվում է վթա-

րային վիճակում. առկա է փլուզման վտանգ:

Դեպքի վայր է մեկնել հատուկ նշանակության փրկարարական աշխատանքներ իրականացնող կենտրոնի փրկարարական ջոկատը եւ ՃԿԿ ԱԻ օպերատիվ խումբը:

Փրկարարները սահմանազատել են տարածքը:

Քարաթափում Մեղրի - Կապան ավտոճանապարհին

Դեկտեմբերի 8-ին, ժամը 15.57-ին ահազանգ է ստացվել, որ Սյունիքի մարզի Մեղրի - Կապան ավտոճանապարհի 15-րդ կմ՝ «Արեւիկ» ցուցանակի մոտակայքում ժայռաբեկոր է ընկել՝ ճանապարհը դարձնելով միակողմանի երթեւեկելի:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ Մ-2 միջպետական ավտոճանապարհի Մեղրի-Քաջարան հատվածի 19-րդ կմ-ում տեղի է ունեցել քարաթափում: Հրշեջ-փրկարարները «Մեղրի ՃՇՇ» ՓԲԸ-ի աշխատակիցների հետ համատեղ հատուկ տեխնիկայի օգնությամբ կատարել են ճանապարհի մաքրման աշխատանքներ:

Այրվել է ավտոմեքենա

Դեկտեմբերի 7-ին, ժամը 22.53-ին ահազանգ է ստացվել, որ Շիրակի մարզի Ջորակապ գյուղի մոտակայքում այրվում է ավտոմեքենա:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ Երեւան-Գյումրի միջպետական ավտոճանապարհի 98-րդ կմ-ում «Մերսեդես» մակնիշի 34 MP 776 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի մասից, կողաշրջվել եւ բռնկվել: Հրդեհը մեկուսացվել է ժամը 23.15-ին, մարվել՝ 23.30-ին: Ավտոմեքենան ամբողջությամբ այրվել է:

ՃՏՊ Հ-30 ավտոճանապարհի Ճամբարակ-Աղբերք հատվածում

Դեկտեմբերի 6-ին, ժամը 20.19-ին տեղեկություն է ստացվել, որ Ճամբարակ-Դրախտիկ ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ, կա տուժած. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ միջհամայնքային Հ-30 ավտոճանապարհի Ճամբարակ-Աղբերք հատվածում (3-րդ կմ) «ԿամԱԶ» մակնիշի 17 US 854 պետհամարանիշով բեռնատարը դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ կողաշրջվել, ինչի հետեւանքով վարորդը՝ 1972 թ. ծնված Վ. Գ.-ն, հայտնվել է ավտոմեքենայի տակ:

Հրշեջ-փրկարարներն օժանդակ տեխնիկայի օգնությամբ դուրս են բերել Վ. Գ.-ին, ով հոսպիտալացվել է «Ճամբարակ» ԲԿ: Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են ծանր:

Քաղաքացին պարաշյուտով ցատկել է կամրջից

Դեկտեմբերի 6-ին, ժամը 14.33-ին ահազանգ է ստացվել, որ քաղաքացին օդապարիկով ցատկել է Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքի կամրջից, սակայն օդապարիկը չի բացվել:

Դեպքի վայր են մեկնել հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի հերթապահ, ՃԿԿ օպերատիվ խմբերը եւ մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ Վրաստանի Հանրապետության քաղաքացի՝ 1986 թ. ծնված Ա. Ն.-ն Արզնիի կամրջից պարաշյուտով թռիչք է կատարել մոտ 15 մետր բարձրությունից, սակայն այն չի բացվել:

Մինչ հրշեջ-փրկարարների կանչի վայր հասնելը՝ Ա. Ն.-ն հոսպիտալացվել է «Աբովյան» ԲԿ, այնտեղից՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ: Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են բավարար:

Հրդեհ Արին-Բերդի փողոցում

Դեկտեմբերի 5-ին, ժամը 21.16-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Արին-Բերդի փողոցի թիվ 13/13 հասցեում գտնվող հյուրանոցային համալիրի սենյակներից մեկում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է Արին-Բերդի փողոցի թիվ 11/4 հասցեում գտնվող շինությունում:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 21.38-ին, մարվել՝ 21.47-ին: «ԱՍԳԻ» ՍՊԸ-ին պատկանող շինությունում այրվել է գրասենյակն ամբողջությամբ՝ 20 քմ եւ գույքը՝ մասամբ:

միջազգային լուրեր

«Հագուպիտ» թայֆունը Ֆիլիպիններում

Ֆիլիպիններում մոլեգնած «Հագուպիտ» թայֆունի զոհ է դարձել 27, տուժել՝ 2,4 մլն, վիրավորվել 480 մարդ: Վնասվել

են 900-ից ավելի տներ, ամբողջովին ավերվել 420-ը: Տարերային աղետին ուղեկցող հորդառատ անձրեւները մի շարք սողանքներ եւ հեղեղումներ են առաջացրել երկրի կենտրոնական մասում, ինչը հանգեցրել է էլեկտրաէներգիայի անջատումների եւ խախտել ցամաքային հաղորդակցությունը: Ծովային եւ օդային տրանսպորտի բնականոն աշխատանքն այժմ վերականգնվում է:

Եմենի ափերին նավ է խորտակվել

Եմենի ափերին Եթովպիայից անօրինական միգրանտների փոխադրող նավ է խորտակվել: Վթարի հետեւանքով 70

մարդ զոհվել է: Բոլոր զոհերը Եթովպիայի քաղաքացի են եղել: Ըստ նախնական տվյալների՝ նավը խորտակվել է ուժեղ փոթորկի պատճառով:

Նեպալում ավտոբուսը ձորն է ընկել

Նեպալում ավտոբուսը 300 մ բարձրությամբ ձորն է ընկել, ինչի հետեւանքով զոհվել է 18, վիրավորվել՝ 50 մարդ: Պատճառը, ըստ ոստիկանների, թույլատրելի արագության գերազանցումն է կամ ավտոբուսի գերբեռնվածությունը. 38 հոգու համար նախատեսված ավտոբուսում եղել է 68 մարդ:

Ձյան տեղումներ Ճապոնիայում

Ճապոնիայի արեւմտյան ափերին ձյան տեղումների հետեւանքով մահացել է 6 մարդ, բնակավայրերը կտրվել են արտաքին աշխարհից, մոտ 600 բնակելի շենքեր

զրկվել են էլեկտրականությունից: Մի քանի օրում Ճապոնիայում գրանցվել են ձյան ռեկորդային քանակությամբ տեղումներ: Յամագատա պրեֆեկտուրայում ձյան շերտը հասել է ավելի քան 100 սմ-ի: Էխիմե եւ Տոկուսիմա պրեֆեկտուրաների սահմանին արգելափակվել է մոտ 130 ավտոմեքենա:

ԱՄՆ-ում ինքնաթիռն ընկել է բնակելի տան վրա

Վաշինգտոնի մերձակայքում բնակելի թաղամասի վրա ռեակտիվ ինքնաթիռ է ընկել, ինչի հետեւանքով զոհվել է 6 մարդ. 3-

ը եղել են ինքնաթիռում, 3-ը՝ 1 կին ու 2 երեխա՝ երկհարկանի տանը: Վնասվել է մի քանի շինություն: Ողբերգության պատճառներն ու հանգամանքները պարզվում են:

Հրդեհ Բաթումի առեւտրի կենտրոնում

Բաթումի առեւտրի կենտրոնում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով մահացել է 2 մարդ: Հրդեհն ընդգրկել է 500 քմ տարածք: Կրակի մարմանը մասնակցել են մի քանի տասնյակ հրշեջ հաշվարկներ: Հրդեհի պատճառները ճշտվում են:

Միասնական կազմով առաջին խորհրդակցությունը

Դեկտեմբերի 8-ին ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունում տեղի ունեցավ միասնական կազմով առաջին ամենշաբաթյա խորհրդակցությունը, որը վարում էր նախարար Արմեն Երիցյանը:

Փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գեներալ-լեյտենանտ Սերգեյ Ազարյանը զեկուցեց անցյալ շաբաթվա ընթացքում գրանցված պատահարների ու ձեռնարկված միջոցների, կատարված հանձնարարականների եւ ընթացիկ աշխատանքների մասին: Նախարարին զեկուցվեց դեկտեմբերի 3-4-ն անցկացված «Հանրային իրազեկումը որպես աղետների ռիսկի նվազեցման կարեւորագույն նախապայման» միջազգային համաժողովի, դեկտեմբերի 4-5-ը ուժեղ երկրաշարժի թեմայով «ԱՐՄԵՆԻԱ» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի հետ համատեղ իրականացված ուսումնավարժանքի եւ դեկտեմբերի 14-ին աղետների բժշկության թեմայով Մարտունիում անցկացվելիք ուսումնավարժանքի նախապատրաստական աշխատանքների մասին: Փրկարար ծառայության տնօրենը հայտնեց նաեւ, որ սկսվել են սակրավորների վերապատրաստման դասընթացները, որոնց մասնակցում են հրշեջ-փրկարարներ մայրաքաղաքից եւ բոլոր մարզերից:

Փոխնախարար Դ. Կարապետյանը տեղեկացրեց դեկտեմբերի 3-ին նախարարություն Օդերեւութաբանական համաշխարհային կազմակերպության պատվիրակության կատարած այցի եւ դրա արդյունքների մասին:

Պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության պետ Ա. Մկրտչյանը տեղեկացրեց, որ ամանորի տոներից առաջ՝ դեկտեմբերի 15-30-ը, տեսչության աշխատակիցները հակահրդեհային անվտանգության ապահովման նպատակով բացատրական-խորհրդատվական աշխատանքներ կիրականացնեն մարդկանց զանգվածային ներկայությամբ բազմաթիվ օբյեկտներում:

Ամենշաբաթյա խորհրդակցությանն առցանց մասնակցող ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենը եւ մարզային փրկարար վարչությունների պետերը զեկուցեցին շաբաթվա ընթացքում գրանցված պատահարների, ինչպես նաեւ մարզային ՃԿԿ-ների ստեղծման ընթացիկ աշխատանքների մասին:

Խորհրդակցության ավարտին ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը «փրկարարական ծառայության գնդապետ» հերթական սպայական կոչում շնորհեց ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ Վաղինակ Հովսեփյանին եւ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի փրկարարական ֆակուլտետի դեկանի տեղակալ Սամվել Շահմուրադյանին:

Նոյեմբերի 17-ին մարզահամերգային համալիրի տարածքում բռնկված հրդեհի կապակցությամբ հերթապահ խմբի արագ արձագանքումը կազմակերպելու, սեղմ ժամկետներում դեպքի վայր հասնելու, հրդեհաշիջման աշխատանքները ճիշտ եւ գրագետ իրականացնելու համար նախարար Արմեն Երիցյանը «Անվեհեր փրկարար» մեդալով պարգեւատրեց փ/ծ մայոր Կարեն Տոնոյանին:

Նախարարի մեկ այլ հրամանով մասնագիտական բարձր պատրաստության եւ ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար «Անվեհեր փրկարար» մեդալով պարգեւատրվեց ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Արագածի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ մայոր Արթուր Կարապետյանը:

Շնորհակալություն, սիրելի՛ նախարար

Ճակատագրի բերումով իմ աշխատանքային 41 տարիներից եւ ոչ մեկը Հայաստանի համար չի եղել: Աշխատանքային կենսագրությունս հյուսվեց հարեւան երկրի կառույցին ծառայելով: Հայաստան տեղափոխվեցի հայտնի իրադարձությունների հետեւանքով եւ արդեն վաստակած հանգստի տարիքում: Երկրորդ կյանքս հայրենիքում սկսեցի հասարակական աշխատանքին լծվելով: Եւ չնայած երկրի դժվարություններին, ուշադրություն միշտ էլ եղել է իմ ու իմ բախտակիցների նկատմամբ: Այժմ ուշադրության հասցեն հաստատվել է արտակարգ իրավիճակների նախարարությունում, եւ ես դրանից շատ գոհ եմ: Իմ նկատմամբ (եւ ոչ միայն իմ, այլեւ բոլոր վետերանների) վերաբերմունքն այնպիսին է, ասես այս կառույցին եմ նվիրել հարուստ կենսափորձս ու մնացել որպես այս կառույցի անդամ: Իմ նկատմամբ ուշադրությունը միշտ զգացել եմ եւ ինձ մեծարված զգացի, երբ նախարարության լրագրողը ինձ այցի եկավ Արարատի մարզ, եղավ իմ տանը, հետաքրքրվեց, թե ինչո՛վ եւ ինչպե՛ս եմ ապրում, զրուցեց հարեւաններիս հետ, եւ արդյունքում գրվեց մի հիանալի ակնարկ, որը սուրճի սեղանի շուրջը բոլոր հարեւաններիս ներկայությամբ ընթերցվեց, ու բոլորս համակվեցինք ջերմ զգացողություններով: Ջերմ զգացողությունը շարունակվեց, երբ մարզի փրկարարական վարչության պետ Մուրադ Մարգարյանը, նախարարության վետերանների միության նախագահ Ներսիկ Հեպոյանը, Արարատի մարզի վետերանների խորհրդի նախագահ Գեղամ Շահբազյանը եղան իմ տանը, ընթերցեցին նախարարի շնորհավորական խոսքը եւ նվիրեցին ժամացույց: Ամեն անգամ ժամը նայելիս վերստին զգում եմ նախարարության ուշադրությունն ու հոգատարությունը: Նախարարության ուշադրության նախաձեռնությունները շարունակական են. օրերս իմ հետեւից մեքենա ուղարկեցին՝ տեսողությանս բուժզննում անցկացնելու նպատակով, որն իրականացվեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ»բժշկական կենտրոնի պոլիկլինիկայում, որից հետո ինձ տրամադրվեց նաեւ ակնոց: Այդ ամբողջ ընթացքում ինձ ուղեկցում էր նախարարության վետերանների խորհրդի նախագահը:

Ասում են՝ հասարակության դեմքը երեւում է նրանից, թե ինչպես են վերաբերվում կանանց ու մեծահասակներին, իսկ Ձեր ղեկավարած կառույցում այդ վերաբերմունքի եւ ուշադրության աղբյուրը Դուք եք, որովհետեւ տան ղեկավարն է թելադրողը, եւ այսօր Դուք Ձեր կողքին ունեք ուշադիր ու հոգատար մարդկանց մի ամբողջ բանակ:

Մաղթում եմ, որ Դուք էլ ապրեք շատ երկար, անկախ ժամանակների թելադրանքից՝ մշտապես լինեք սիրված ու գնահատված եւ մեծ տարիքում էլ լինեք ուշադրության կենտրոնում, որին Դուք արժանի եք:

Սեդա Հակոբի Մանուկովա

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. դեկտեմբերի 4-10-ը ՍՊԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է 5 երկրաշարժ, որից չորսը՝ 3-ից մինչեւ 5 բալ ուժգնությամբ, Թուրքիայի Վան քաղաքի տարածքում: Դեկտեմբերի 8-ին Վրաստան-Ռուսաստան սահմանային գոտում տեղի ունեցած 4 բալ ուժգնությամբ ստորգետնյա ցնցման էպիկենտրոնը գտնվում էր Լագոդեխի քաղաքից 19 կմ հյուսիս-արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է 4 երկրաշարժ: Դեկտեմբերի 6-ին եւ 8-ին Պանամա-Կոստա Ռիկա սահմանային գոտում՝ Պունտա դե Բուրիկա քաղաքից 17 կմ հարավ-արեւելք, գրանցվել է 2 երկրաշարժ՝ 6.0 եւ 6.6 մագնիտուդով: Դեկտեմբերի 6-ին Ինդոնեզիայի Տանիմբար կղզեխմբի հյուսիսային մասում գրանցված երկրաշարժն ունեցել է 6.0 մագնիտուդ: Հաջորդ օրը տեղի ունեցած 6.8 մագնիտուդով սեյսմիկ իրադարձության էպիկենտրոնը գտնվում էր Պապուա Նոր Գվինեայի Պանգունա քաղաքից 116 կմ հարավ-արեւմուտք: Երկրաշարժերի հետեւանքով զոհերի եւ ավերածությունների մասին տեղեկություններ չկան:

«ՍՊԾ» գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում

Դեկտեմբերի 12-ին, 13-ի գիշերը, 16-ին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ, 13-ի օրվա երկրորդ կեսից, 14-ին, 15-ի գիշերը շրջանների զգալի մասում, 15-ի ցերեկը՝ արեւելյան շրջաններում ժամանակ առ ժամանակ սպասվում են տեղումներ եւ մառախուղ, լեռնային գոտիներում՝ ձյուն: Քամին՝ հարավարեւմտյան՝ 2-7 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 14-ի ցերեկը կնվազի 2-3 աստիճանով, 16-ի ցերեկը նույնքանով կբարձրանա:

Օդի ջերմաստիճանը դեկտեմբերի 12-ի գիշերը կտատանվի՝ լեռնային շրջաններում՝ -5... -10, Լոռիում՝ -1... +3, Տավուշում՝ 0... +5, Արագածոտնի նախալեռներում՝ 0... +3, Արարատյան դաշտում՝ 0... +3, Սյունիքի հովիտներում՝ +4... +8, Սյունիքի նախալեռներում՝ 0... +3 եւ Արցախում՝ +1... +5 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը դեկտեմբերի 12-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +2... +7, Լոռիում՝ +10... +13, Տավուշում՝ +13... +17, Արագածոտնի նախալեռներում՝ +6... +10, Արարատյան դաշտում՝ +9... +12, Սյունիքի հովիտներում՝ +13... +17, Սյունիքի նախալեռներում՝ +10... +13 եւ Արցախում՝ +7... +12 աստիճանի սահմաններում:

Երեւանում

Դեկտեմբերի 12-ին, 13-ի գիշերը, 15-ի ցերեկը, 16-ին սպասվում է առանց տեղումների եղանակ, 13-ին՝ օրվա երկրորդ կեսին, 14-ին, 15-ի գիշերը ժամանակ առ ժամանակ սպասվում են անձրեւ եւ մառախուղ:

Օդի ջերմաստիճանը դեկտեմբերի 11-ի գիշերը սպասվում է՝ +1... +3, ցերեկը՝ +10... +12 աստիճան տաքություն:

ՀՀ ՏԿԱԻ նախարարի այցը Հայաստանի ազգային արխիվ

Դեկտեմբերի 8-ին ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը այցելեց Հայաստանի ազգային արխիվի երեւանյան գլխավոր մասնաճյուղ: Այցի շրջանակներում նախարարը ծանոթացավ ՀՀ ազգային արխիվի երեւանյան մասնաճյուղի փաստաթղթերի պահպանման պահոցներին, արխիվի թվայնացման մեխանիզմներին, տեղեկատու-որոնողական բազայի աշխատանքային սկզբունքներին, ինչպես նաեւ՝ սերվերային համակարգի գործունեությանը:



ՀՀ ազգային արխիվում առկա տեխնիկական վիճակին ծանոթանալուց հետո նախարար Երիցյանն աշխատանքային խորհրդակցություն անցկացրեց արխիվի ղեկավար կազմի եւ աշխատակիցների հետ: Խորհրդակցության ընթացքում Ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը ներկայացրեց փաստաթղթերի արխիվացման, պահպանման եւ հետագայում դրանց կիրառման, ինչպես նաեւ՝ էլեկտրոնային շտեմարանի ստեղծման գործընթացը: Տնօրենը հատկապես նշեց, որ մեկ տարվա ընթացքում Ազգային արխիվը փաստաթղթեր է տրամադրել ավելի քան 30 000 քաղաքացիների: Ներկայացնելով Ազգային արխիվում առկա խնդիրները՝ Ա. Վիրաբյանը հատկապես շեշտեց նոր տեխնոլոգիաների ներդրման եւ առկա տեխնոլոգիաների արդիականացման խնդիրները: Տնօրենը նաեւ անդրադարձավ Ազգային արխիվի անձնակազմի աշխատավարձի բարձրացման խնդրին:

Ողջունելով ՀՀ ազգային արխիվի աշխատակազմին՝ նախարար Ա. Երիցյանը ներկայացրեց նորաստեղծ ՏԿԱԻ նախարարության ծառայություններն ու աշխատանքային մոտեցումները, ինչպես նաեւ ուրվագծեց նախարարության կազմում Ազգային արխիվի գործունեության տեսլականն ու արդյունավետ համագործակցության ուղիները: Անդրադառնալով Ա. Վիրաբյանի բարձրաձայնած խնդիրներին՝ նախարար Երիցյանը նշեց, որ ՊՈԱԿ-ի աշխատանքը պետք է այնպես կազմակերպվի, որպեսզի բարձրանան եւ աշխատանքային ցուցանիշները, եւ աշխատակիցների աշխատավարձերը: «Մենք միասին շատ անելիքներ ունենք»,- ամփոփելով հանդիպումն ասաց Ա. Երիցյանը:

ՀՀ ՏԿԱԻ նախարարն ընդունել է Չինաստանի նորանշանակ դեսպանին

Դեկտեմբերի 8-ին ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը ճանաչողական այցի շրջանակներում ընդունեց Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Թիան Էրլունին:

Ողջունելով դեսպանին՝ նախարար Երիցյանը նրան ծանոթացրեց տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունների միավորման համատեքստում կառույցի գործառույթների ընդլայնման շրջանակներին, ինչը ենթադրում է, որ նախարարության միջպետական համագործակցության շրջանակները նույնպես ենթակա են ընդլայնման: Պատասխան խոսքում դեսպանը նշեց, որ Չինաստանի եւ ՀՀ ԱԻՆ-ի միջեւ տարիների ընթացքում սերտ եւ արդյունավետ համագործակցություն է հաստատվել, որը միտում ունի դուրս գալու նոր մակարդակ: Կարեւորելով ՏԿԱԻՆ-ի հետ համագործակցության նոր եզրերը՝ դեսպանը շեշտեց, որ համագործակցությունը տարածաշրջանային եւ միջգերատեսչական մակարդակում նպաստում է միջպետական հարաբերությունների ամրապնդմանը:



ՏԿԱԻ նախարարը եւ Չինաստանի դեսպանը բանավոր համաձայնություն ձեռք բերեցին համագործակցության հետագա զարգացումների վերաբերյալ: Հիշեցնենք, որ հայ-չինական համագործակցության շրջանակներում 2013 թ. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը փոխըմբռնման հուշագիր է ստորագրել: Չինաստան կատարած այցի ժամանակ նախարարն արծարծել է երկու նախարարությունների արբանյակային կապի համատեղ համագործակցության տեխնիկական լուծումների հարցը:

Չինական կողմին առաջարկվել էր ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնում ստեղծել Ռիսկերի նվազեցման տիեզերական կենտրոն, որին պետք է անվճար հիմունքներով տրամադրվեն չինական HJ-14-A եւ HJ-14-B արբանյակներից ստացվող տվյալները՝ մշակման, վերլուծության եւ մշտադիտարկման տեխնիկական միջոցների, սարքավորումների եւ ծրագրերի ամբողջական փաթեթների ներառմամբ:

Հանդիպումից հետո ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ, գեներալ-մայոր Ն. Գրիգորյանը ճանաչողական շրջայց կազմակերպեց դեսպան Էրլունի համար՝ մասնավորապես ծանոթացնելով վերջինիս ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեությանը:

ՏԿԱԻ նախարարը հանդիպել է աշակերտների հետ

Դեկտեմբերի 6-ին ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարար Ա. Երիցյանն ընդունել է Արմավիր քաղաքի Մ. Սիլիկյանի անվան 6-րդ հիմնական դպրոցի աշակերտական խորհրդի անդամներին (8-9-րդ դասարանների շուրջ 20 աշակերտ):

Երեխաներին ուղեկցում էին դպրոցի տնօրենի տեղակալ Ն. Խորենյանը, պատմության ուսուցչուհի Զ. Տոնոյանը, ֆիզիկական դաստիարակության ուսուցիչ Հ. Դավթյանը, զինղեկ Ա. Ասատրյանը եւ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Ա. Մարգարյանը:

Աշակերտների այցը նախարարություն կազմակերպվել էր դպրոցի նախաձեռնությամբ՝ Սպիտակի երկրաշարժի տարելիցին ընդառաջ: Հիմնական նպատակն էր ծանոթացնել երեխաներին նախարարության՝ որպես արտակարգ իրավիճակների ու քաղաքաշտպանության համար պատասխանատու կառույցի աշխատանքին:

Նախարար Ա. Երիցյանն իր պատանի ունկնդիրներին մանրամասն ներկայացրեց նախարարության հիմնական գործառույթներն ու խնդիրները, գործակալությունների աշխատանքը, ձեռքբերումներն ու զարգացման ծրագրերը:

Հանդիպումն ընթանում էր նախարարության խորհրդակցությունների սրահում, որտեղ երեխաները հնարավորություն ունեին տեսնելու, թե ինչպես է խոշոր աղետի դեպքում արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովը կառավարման կենտրոնից ղեկավարում արձագանքման աշխատանքները:

Երեխաներին հիմնականում հետաքրքրում էին սեյսմիկ պաշտպանության հետ կապված հարցերն ու Գառնու երկրաֆիզիկական դիտարանը: Պատասխանելով հարցերին՝ Ա. Երիցյանը նրանց հրավիրեց դիտարանի պաշտոնական բացումից հետո այցելել Գառնի եւ անձամբ տեսնել դիտարանի աշխատանքը:

ՏԿԱԻ նախարարի հետ հանդիպումից հետո երեխաները եղան նաեւ ՓԾ Ճգնաժամային կառավարման կենտրոնում, որտեղ նրանց ներկայացվեցին կենտրոնի աշխատանքի սկզբունքներն ու տեխնիկական հագեցվածությունը:

Երեխաները, ոգեւորվելով նախարարի հետ հանդիպումից, որոշել են դպրոցում պատանի փրկարարների խումբ ստեղծել, իսկ ուսուցչական կազմի ներկայացուցիչները դպրոցի տնօրինության եւ աշակերտների անունից շնորհակալություն հայտնեցին նախարար Ա. Երիցյանին՝ բարձր մակարդակով կազմակերպված եւ ջերմ ընդունելության համար:

Նոր նշանակումներ եւ կոչումներ

Դեկտեմբերի 10-ին ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի հրամանով՝ նախարարության համակարգում կատարվել են մի շարք նոր նշանակումներ՝

ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության էրեբունի բաժնում, Ծառայության կազմակերպման վարչությունում, ՕԿՎ ճգնաժամային կառավարման կենտրոնում, ինչպես նաեւ Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի եւ Սյունիքի մարզային փրկարարական վարչություններում: Նախարար Ա. Երիցյանի այլ հրամանով՝ ԵՓՎ Կենտրոն բաժնի հրդեհաշիջման ապահովման հարցերով ավագ հրահանգիչ Գիյոմ Միրզոյանին շնորհվել է փ/ծ մայորի կոչում:

Օդանավակայանները պատրաստ են աղետներին դիմակայելու

Դեկտեմբերի 4-5-ը ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի, «ԱՐՄԵՆԻԱ» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի հետ համատեղ եւ գերմանական DHL փոստային գործակալության մասնակցությամբ, կազմակերպել էր վարժանք՝ ուժեղ երկրաշարժի թեմայով:

Վարժանքն անցկացվում էր «Աղետներին դիմակայելու պատրաստ օդանավակայաններ» (GARD) գլոբալ ծրագրի շրջանակներում:

Հիմնական նպատակն էր փորձարկել «ԱՐՄԵՆԻԱ» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի՝ արտակարգ իրավիճակներում գործելու եւ ՀՀ ՏԿԱԻ նախարարության հետ փոխհամագործակցության նախագիծը, ինչպես նաեւ՝ կատարելագործել վարժանքի մասնակիցների գործնական հմտությունները եւ հղկել արտերկրից ժամանած փրկարարական թիմերի ընդունման գործընթացը: Միաժամանակ խաղարկվում էր հայ փրկարարների միջազգային թիմի արտասահմանյան առաքելության ուղեւորվելու գործընթացը:

Միջոցառումն իրականացվեց երկու փուլով: Առաջինը տեսական էր, իսկ երկրորդ փուլում անցկացվեց դաշտային վարժանք:

Ըստ սցենարի՝ ՀՀ Կոտայքի մարզում տեղի էր ունեցել ուժեղ երկրաշարժ, որի հետեւանքով ստեղծվել էր բարդ իրավիճակ: Երկրի կարողությունները չէին բավարարում աղետի հետեւանքները վերացնելու համար, եւ Հայաստանը դիմել էր միջազգային հանրության օգնությանը:

Երկրաշարժի հետեւանքով վնասվել էր «Զվարթնոց» օդանավակայանի պահուստային էներգամատակարարման ցանցը, ինտերնետային կապում առկա էին խնդիրներ: Օդանավակայանն աշխատում էր ճգնաժամային ռեժիմում: Հրդեհ էր բռնկվել վառելիքի պահեստներում: Վնասվել էր նաեւ օդանավակայանի թռիչքուղին («Շիրակ» օդանավակայանի խաղարկման համար): Բժշկական սարքավորումներ բերող բեռնատար ինքնաթիռը վթարային վայրէջք էր կատարել գրունտային հատվածում, եւ ինքնաթիռից արտահոսած վառելիքից հրդեհ էր բռնկվել:

«Զվարթնոց» միջազգային օդանավակայանը դիմումներ էր ստանում՝ արտերկրից ժամանող օդանավերի ընդունման խնդրանքով:

Տեսական քննարկումների ընթացքում մասնակիցներին ներկայացվեց «ԱՐՄԵՆԻԱ» միջազգային օդանավակայաններ» ընկերության՝ արտակարգ իրավիճակներում գործելու եւ ՀՀ պետական մարմինների հետ փոխհամագործակցության նախագիծը: Միջանկյալների միջոցով ներկայացվեցին նախագծի բաժիններին համապատասխան իրավիճակներ, եւ քննարկվեցին այդ իրավիճակներում օդանավակայանի եւ ՀՀ պետական կառավարման մարմինների գործողությունները:

Հաջորդ օրը մեկնարկած գործնական աշխատանքների ընթացքում խաղարկվեց նախապես մշակված ուժեղ երկրաշարժի սցենարը: Որպես երկրորդային հետեւանք՝ օդանավակայանի գրունտային հատվածում վթարային վայրէջք կատարած ինքնաթիռում «հրդեհ» էր բռնկվել:

Պայմանական հրդեհը մարվեց օդանավակայանի հրշեջ ծառայության ուժերով: Հրդեհաշիջման աշխատանքներում ներգրավված էր 3 մարտական հաշվարկ: Իրականացվեց վթարային վայրէջք կատարած ինքնաթիռի ուղեւորների տարհանում վթարային ելքով: ՓԲԸ ճառագայթային, քիմիական եւ կենսաբանական իրավիճակի մոնիթորինգի բաժնի ուժերով իրականացվեց տարածքի մոնիթորինգ՝ հնարավոր ճառագայթային գործոնով պայմանավորված արտակարգ իրավիճակը կանխելու համար: ՀՀ ԱՆ «Ավիամեդ» ՓԲԸ բուժանձնակազմերի հետ համատեղ կազմակերպվեց «տուժածների» բուժօգնությունը: Օդանավակայանի անվտանգության ծառայությունը հատուկ ավտոբուսով կազմակերպեց ուղեւորների տարհանում:

Լրագրողների հետ զրույցում ՓԲ տնօրենի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Վրեժ Գաբրիելյանը նշեց, որ դրական է գնահատում վարժանքի արդյունքները.

- Մենք փորձարկում էինք օդանավակայանի՝ արտակարգ իրավիճակներում գործելու եւ ՀՀ ՏԿԱԻ նախարարության հետ փոխհամագործակցության ծրագիրը, որպեսզի այնտեղ ընդգրկված բոլոր գերատեսչությունները հստակ իմանան իրենց անելիքներն արտակարգ իրավիճակի դեպքում, կատարելագործեն իրենց հմտությունները, ինչպես նաեւ՝ կարողանանք վերհանել բացթողումներն ու շտկենք դրանք: Միեւնույն ժամանակ մենք խաղարկում էինք նախարարության փրկարարների միջազգային թիմերի արտերկիր օգնության մեկնելու սցենարը, որպեսզի իրական պայմաններում այդ գործընթացն ավելի արագ ու կազմակերպված անցնի:

Անդրադառնալով ՏԿԱԻ նախարարության դինամիկ եւ արագընթաց զարգացմանը՝ Վ. Գաբրիելյանը նշեց, որ Հայաստանը փրկարարներ «ներմուծող» երկրից դարձել է փրկարարներ «արտահանող» պետություն:

Վարժանքի ընթացքին հետեւում էին նաեւ ՄԱԶԾ ներկայացուցիչներն ու գերմանական DHL փոստային գործակալության փորձագետները:

Ուսումնավարժանք Երեւանի Մ. Նալբանդյանի անվան 33-րդ հիմնական դպրոցում

Դեկտեմբերի 9-ին ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունը «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հետ համատեղ Երեւանի Մ. Նալբանդյանի անվան 33-րդ հիմնական դպրոցում անցկացրեց հատուկ տակտիկական ուսումնավարժանք՝ «Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը եւ իրականացումը դպրոցում» թեմայով:

Երեւանի Մ. Նալբանդյանի անվան հիմնական դպրոցը ներգրավված է կազմակերպության Աղետների ռիսկի նվազեցման ներառական ծրագրի երկրորդ փուլում, որի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության եւ քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության ֆինանսավորմամբ Երեւանի, ինչպես նաեւ Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի եւ Արագածոտնի մարզերի 61 կրթական եւ խնամքի հաստատություններում իրականացվում են աղետների ռիսկի նվազեցման աշխատանքներ:

Ըստ ուսումնավարժանքի սցենարի՝ «911» ծառայությունում ահազանգ է ստացվում, որ դպրոցի 2-րդ հարկի դասասենյակներից մեկում հրդեհ է բռնկվել: Առաջացել է ծխապատ գոտի, կրակը տարածվում է:

Լրագրողների հետ զրույցում «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության ծրագրերի իրականացման ղեկավար Իռեն Սարգսյանը նշեց, որ առաջիկա մեկ ամսվա ընթացքում Երեւանի Մ. Նալբանդյանի անվան հիմնական դպրոցում կանցկացվեն ուսուցողական դասընթացներ, որոնց ընթացքում ուսուցչական անձնակազմը եւ դպրոցի աշակերտները կսովորեն, թե ինչ քայլեր է հարկավոր ձեռնարկել հրդեհի դեպքում: *«Այս վարժանքի անցկացման պահին ուսուցիչները եւ աշակերտները դեռեւս ուսուցողական դասընթացներ չէին անցել եւ պատրաստ չէին: Առաջիկա մեկ ամսվա ընթացքում դպրոցում կլինեն ուսուցողական դասընթացներ, եւ ցանկալի է, որ դրանց ավարտից հետո տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ նմանօրինակ եւս մեկ վարժանք անցկացնենք, որպեսզի հասկանանք, թե որքանով են արդյունավետ եղել այդ դասընթացները»,-* ասաց Ի. Սարգսյանը:

Սերտանում է համագործակցությունը դեսպանատների հետ

Դեկտեմբերի 9-ին ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունում հյուրընկալվել էին Հայաստանում եւ Վրաստանում Բրիտանական դեսպանությունների ներկայացուցիչները:

Նրանց ընդունեց Փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գեներալ-լեյտենանտ Սերգեյ Ազարյանը:

Այցի հիմնական նպատակն էր քննարկել արտակարգ իրավիճակի դեպքում դեսպանատների անվտանգության ապահովման հարցերը:

Ողջունելով հյուրերին՝ ՓԲ տնօրենը նշեց, որ ուրախ է ավելի սերտացնել համագործակցությունը.

- Մենք օտարերկրյա դեսպանատների հետ աշխատանքի լավ փորձ ունենք եւ բազմաթիվ ոլորտներում կարող ենք փոխգործակցել: Շատ լավ աշխատանքային ու բարեկամական հարաբերություններ ունենք նաեւ Վրաստանի ՆԳՆ արտակարգ իրավիճակների դեպարտամենտի հետ, իսկ մեր «911» ծառայությունը պատրաստ է շուրջօրյա արձագանքելու բոլոր ահազանգերին: Այսօր արձագանքման ծառայություններին վերաբերող զանգերի շուրջ 60 տոկոսը ստանում է հենց «911»-ը:

ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի փոխդեսպան Ըմայլս Մորգն իր խոսքում նշեց, որ շատ դեպքերի մասին է լսել, երբ արագընթաց օգնության է հասել «911» ծառայությունը.

- Կուզենայինք իմանալ, թե որոնք են դեսպանատները եւ դրա աշխատակիցներին սպառնացող հիմնական ռիսկերը, որոնք կարող են լինել թե՛ շենքի ներսում, թե՛ հանրապետության տարածքում: Կուզենայինք նաեւ ճշտել վտանգի դեպքում ահազանգման, մեր աշխատակիցների եւ նրանց ընտանիքների տարհանման ու արտակարգ իրավիճակներին արձագանքման հարցերը:

ՓԲ տնօրեն, փ/ծ գեներալ-լեյտենանտ Ս. Ազարյանը մտահոգություն հայտնեց, որ Հայաստանի նման փոքր երկրում առկա են վտանգների համարյա բոլոր տեսակները, սակայն արվում է ամեն հնարավորը պատրաստվածության մակարդակը բարձրացնելու եւ ռիսկերը նվազեցնելու համար:

Հանդիպման ավարտին կողմերը պայմանավորվեցին նշանակել պատասխանատու անձանց, որոնք միասին կքննարկեն արտակարգ իրավիճակներում նախարարության եւ դեսպանատան համագործակցության հարցերը, մասնավորապես, գործողությունների ծրագրի մշակման եւ համատեղ վարժանքների կազմակերպման վերաբերյալ:

Դեսպանությունների աշխատակիցները եղան նաեւ ճգնաժամային կառավարման կենտրոնում, որտեղ նրանց հանգամանալից ներկայացվեցին կենտրոնի գործառույթները, հիմնական խնդիրները, ծրագրային ու տեխնիկական հագեցվածությունը:

Օտարերկրյա հյուրերը տպավորված էին տեսածով եւ կրկին հավաստեցին ՏԿԱԻ նախարարության հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը:

Երեխաների նկարների թաքնված բովանդակությունը

Նկարն անկախ մարդու տարիքից արտահայտում է մարդու հոգեկան աշխարհի բովանդակությունը, նրա անկումներն ու վերելքները, տվյալ պահի տրամադրությունը, զգացմունքները, հույզերը, որոնք ուղղված են սեփական անձին, շրջապատին եւ այլն: Եթե ծնողները կարողանան կարդալ իրենց երեխաների նկարների ծածկագիրը, ապա նրանց համար ավելի հեշտ կլինի հասկանալ իրենց փոքրիկների հոգեվիճակը եւ օգնել, իսկ դժվարությունների դեպքում էլ հաղթահարել դրանք: Նկարելը հնարավորություն է տալիս փոքրիկին արտահայտելու իր այն հույզերն ու զգացմունքները, որոնք նա դեռ չի հասկանում եւ չի կարողանում արտահայտել բառերով: Նկարելը երեխայի համար արվեստ չէ, այլ խոսք, ինքնարտահայտման միջոց, որին նա դեռ լիարժեք չի տիրապետում:

Տարիքային առանձնահատկությունները

Նկարների վերլուծության ժամանակ շատ կարեւոր է հաշվի առնել երեխայի տարիքը, քանի որ տարբեր տարիքում նկարված կերպարները տարբեր մեկնաբանություն ունեն: 2 տարեկան երեխային բնորոշ է նկարել փայտիկներ, շրջանակներ, 3 տարեկանում երեխայի մեջ նոր-նոր մարդուկներ նկարելու ցանկություն է առաջանում, որոնց լիարժեք դեռ չի կարողանում պատկերել: 5 տարեկանում երեխաները նոր սկսում են մարդուկի նկարին ավելացնել եւ լիարժեք պատկերել բերան, քիթ, աչքեր, մատներ եւ այլն: 6-7 տարեկանում նկարված մարդուկներն արդեն ունենում են պարանոց, հագուստ եւ այլն: Եթե 7 տարեկանում երեխան շարունակում է նկարել փայտիկներ եւ շրջանակներ, ապա ծնողները պետք է ուշադրություն դարձնեն, թե ինչպես զարգացնեն երեխային, քանի որ նա տարիքային առանձնահատկությունների առումով զիջում է հասակակիցներին:

Հոգեբաներն առաջարկում են վերծանել երեխայի նկարները՝ սկսած 4 տարեկանից: Ծնողները կարող են ուսումնասիրել նաեւ ավելի փոքրիկների նկարները, սակայն այդ ժամանակ կոդերը վերծանելու անհրաժեշտություն չի լինում: Այդ ժամանակ դուք ավելի լավ է հիմնվեք ձեր տվյալ պահին ունեցած զգացողությունների վրա: Եթե նկարին նայելիս միայն դրական զգացողություններ եք ունենում, ապա երեխային ոչինչ չի անհանգստացնում, իսկ եթե բացասական են զգացողությունները, ապա փորձեք գտնել պատճառները:

Երկու տարեկանում երեխան մարդուկին նկարում է անվերջանալի շրջանակների տեսքով, 3 տարեկանում շրջանակներն արդեն փակ են, արդեն սկսում են նկատվել թվացյալ աչքերը, ձեռքերը եւ ոտքերը:

Չորս տարեկանում արդեն մարմնի բոլոր մասերը կան, սակայն որոշակի անհամաչափություն է նկատվում, մարդուկի դեմքին ժպիտ է հայտնվում:

Հինգ տարեկանում մարմնի բոլոր մասերը հստակ նկարված են, նաեւ արտահայտվում է մարդուկի սեռային պատկանելությունը, այսինքն՝ այս տարիքում երեխան արդեն տարանջատում է տղա եւ աղջիկ մարդուկներին:

Այս ամենն իմանալով՝ ծնողները պետք է հաշվի առնեն նաեւ երեխայի անհատական առանձնահատկությունները, քանի որ տարբեր երեխաների զարգացման ընթացքը տարբեր է եւ շատ անհատական: Սակայն կան մի շարք օրինաչափություններ, որոնք բնորոշ են բոլոր երեխաներին:

Ընտանիքի նկար

Երեխաներն ամենաշատ նկարում են իրենց ընտանիքը: Այդ թեմատիկ նկարի միջոցով նա շատ տեղեկություն կարող է հաղորդել իր ընտանիքի եւ անդամների միջեւ գոյություն ունեցող կապերի մասին: Կարելի է ասել՝ երեխայի ընտանիքի նկարն անսխալ ախտորոշում է տալիս ընտանիքի իրական պատկերի մասին: Ընտանիքի

նկարում նախեւառաջ աչքի է ընկնում ընտանիքի անդամների դասավորվածությունը, թե ինչ հերթականությամբ են նրանք նկարված եւ ինչ չափսերի: Առաջինը երեխան նկարում է ընտանիքի ամենագլխավոր անդամին եւ հաջորդաբար, ըստ կարեւորության, մյուս անդամներին: Թե երեխան իրեն ընտանիքի ո՞ր անդամի կողքին է նկարել՝ վկայում է նրա հուզական կապվածության մասին: Եթե ընտանիքի անդամները ձեռքերը բռնած են նկարված, ապա դա վկայում է ընտանիքի անդամների միջեւ դրական եւ հուզական կապվածության մասին: Իսկ եթե առանձին են նկարված, առանձին սենյակներում, ապա դա վկայում է հակառակի մասին: Սակայն նորից հիշեցնենք, որ յուրաքանչյուր նկար պետք է անհատական վերլուծություն ունենա:

Եթե ընտանիքի անդամներից մեկը նկարված է կողքից կամ մեջքով, ապա երեխան վախենում է կամ չի սիրում նրան: Սակայն դա կարող է ժամանակավոր լինել, եթե նրանց միջեւ վեճ է եղել, որը կմոռացվի, եւ ընտանիքի այդ անդամն այլ կերպ կնկարվի: Հաճախ են լինում դեպքեր, երբ երեխաները չեն նկարում իրենց փոքրիկ եղբորը կամ քրոջը, որի ծնվելուց հետո ծնողների ուշադրությունն ուղղվել է նրա վրա: Եթե ընտանիքի անդամներից որեւէ մեկը նկարում բացակայում է, ապա պետք է անպայման երեխային հարցնել, թե նա որտեղ է: Երեխան անպայման բացատրություն կտա, ասելով, թե տանը չէ, մյուս սենյակում է կամ մոռացել է նկարել: Բոլոր դեպքերում այդ անդամի բացակայությունն ունի ավելի խորքային իմաստ, հնարավոր է՝ երեխան ունի տվյալ անդամի ուշադրության կարիքը, կամ վախենում է նրանից, կամ գերադասում է ժամանակն առանց նրա անցկացնել եւ այլն: Սակայն երբ երեխան ընտանիքի նկարում իրեն չի նկարում, ապա դա ծնողներին մտահոգվելու տեղիք պետք է տա, հնարավոր է՝ երեխան իրեն անհարմար կամ ավելորդ է զգում ընտանիքում:

Գույների նշանակությունը

Գույների կիրառությունն այս թեմատիկ նկարում շատ տեղեկություն կարող է ձեզ հաղորդել այն մասին, թե նկարող երեխան ինչո՛վ է ապրում եւ ի՛նչ է զգում: Եթե երեխայի նկարում առկա են 5-7 գույներ, ապա դա վկայում է, որ երեխան ապրում է լի կյանքով եւ վայելում է կյանքի գույները: 1-2 գույնի կիրառումը բնորոշ է 2 տարեկան երեխային, այլ ոչ թե 3-4: Այս տարիքի երեխայի գույնի քիչ կիրառումը կվկայի, որ ինչպես իր նկարում, այնպես էլ իր կյանքում գույները պակասում են:

Թե ինչ գույներով է նա նկարում ընտանիքի անդամներին, դա նույնպես կարող է շատ տեղեկություն հաղորդել ընտանիքի անդամների եւ երեխայի միջանձնային հարաբերությունների մասին: Օրինակ՝ երեխան ընտանիքի այն անդամին, ում չի սիրում, կնկարի իր չսիրած գույնով, իսկ ում սիրում է՝ սիրած գույնով:

Գույները, որոնք գերակշռում են նկարում

Կապույտ - երեխան հանգիստ է եւ հավասարակշռված: Նա իրեն միայնակ չի զգում: Նվիրվում է ամբողջությամբ, հարաբերություններում ավելի շատ տալիս է, քան վերցնում: Շատ դեպքերում երեխաներն ընտրում են կապույտը ոչ թե որ հանգիստ են, այլ ուզում են հանգստանալ:

Կանաչ - երեխան անկախ է, համառ: Կանաչը նրա համար հանգստություն է եւ անվտանգություն, որին նա ձգտում է:

Կարմիր - երեխան ագրեսիվ է, ակտիվ, դյուրագրգիռ:

Դեղին - Հետաքրքրասեր է եւ լավատես:

Մանուշակագույն - Երեխան սիրում է երեւակայել, հուզական է, շատ զգայուն եւ խոցելի:

Շագանակագույն - Երեխան հաճախ է ունենում բացասական հույզեր: Դանդաղաշարժ է, ֆիզիկապես՝ տկար, թուլակազմ:

Սեւ - Երեխան ճնշված է, սեւ գույնը նրա համար ընդդիմություն է այն անհարմարության նկատմամբ, որը նա զգում է: Անհրաժեշտ է փոխել նրա միջավայրը:

Մոխրագույն - այս գույնը հավասարազոր է գույնի բացակայությանը: Երեխան անտարբեր է միջավայրի նկատմամբ, նա փորձում է չնկատել՝ ինչն է իրեն դուր գալիս եւ ինչն է անհանգստացնում:

Ընտանիքի նկարը ձեզ հնարավորություն կտա իմանալու երեխայի հոգեբանական դիմանկարը, բայց նաեւ՝ նկարելը կմարզի եւ կամրացնի նրա մատիկները, որն էլ հետագայում կօգնի ավելի հեշտությամբ տիրապետելու գրչին:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Նիտրատները շատ ավելի օգտակա՞ր են

Լայնորեն տարածված է այն կարծիքը, թե նիտրատներն օրգանիզմի համար վնասակար նյութեր են, որոնք կարող են քաղցկեղ առաջացնել՝ վերածվելով նիտրոզամինի:

Սակայն վերջերս ավելի ու ավելի հաճախ են ձայն բարձրացնում այն գիտնականները, որոնք նիտրատներին վերագրում են մարդու առողջության համար օգտակար հատկություններ. դրանք, իբրեւ թե, կարող են իջեցնել զարկերակային ճնշումը, ապահովել առողջ նյութափոխանակություն եւ դրականորեն ազդել արյան մածուցիկության վրա:

Ինչպես պնդում են գիտնականները, այդ նյութերը բարելավում են թթվածնի ներհոսքը դեպի ուղեղ: Այդպիսով, ըստ ուսումնասիրությունների արդյունքների, նիտրատներով հարուստ բանջարեղենը կարող է դառնալ գործուն բնական դեղամիջոց, որը հաջողությամբ կպայքարի արյան շրջանառության համակարգի խանգարումների

եւ ծերացման պատճառով առաջացող տկարամտության դեմ:

Ընդ որում, ինչպես նշվում է, նիտրատները բույսերում հայտնվում են ոչ միայն պարարտանյութերի հետ: Բույսը ազոտ վերցնում է հողից եւ կուտակում այն նախեւառաջ տերեւներում՝ փոխարկելով նիտրատների: Այն դեպքում, երբ բույսն արեւից շատ լույս է ստանում, ապա նիտրատներն իրենց հերթին փոխակերպվում են պրոտեինների: Այդ կերպ լույսի անբավարարության դեպքում ձմեռային բանջարեղենը՝ բազուկը, սպանախը, կաղամբը,

բնական եղանակով շատ նիտրատներ է պարունակում:

Առայժմ պարզ չէ միայն, թե արդյոք պարարտանյութերի ազոտային միացությունները գործում են բնականների՞ նման: Եթե այդպես է, ապա պարարտանյութ արտադրողներն այդ պնդումը կարող են դարձնել իրենց կարգախոսը՝ առողջության պահպանման հովանու ներքո:

Երկրաշարժ Ղրիմում

որի ականատեսն էր նույնիսկ Օստապ Բենդերը

1927 թ. աշնանը ԽՍՀՄ-ում վաճառքի հանվեցին փոստային տարօրինակ բացիկներ: Դրանց վրա պատկերված էին տեսարաններ Ղրիմի թերակղզուց, բայց ինչպիսի՞ տեսարաններ... Գեղեցիկ, գրավիչ ու արեւոտ ծովափերի փոխարեն այնտեղ պատկերված էին խարխլված տներ, ավերված շենքեր ու անօթեւան մնացած տեղաբնակների ընտանիքներ: Ընդ որում՝ բացիկները լուսանկարչական էին, այսինքն՝ ավերածությունների ու տուժած մարդկանց պատկերներն իրական էին: Այդպիսի տեսք ուներ թերակղզին տեղի ունեցած երկրաշարժից հետո: Ի դեպ, այդ երկրաշարժը նկարագրված է Իլֆի ու Պետրովի «Տասներկու աթոռ» գրքում:

***

Ավարտելով հյուրախաղերը Թիֆլիսում՝ Կոլումբի մոսկովյան թատրոնը մեկնել է Յալթա:

***

Օստապը ձեռքը տանում է գրպանը՝ գործիքների հետեւից:

- Դե՛,- ասում է նա՝ ձեռքը երկարացնելով դեպի աթոռը,- եւս մեկ լուցկի, առաջնո՛րդ:

Լուցկին բռնկվում է, եւ, տարօրինակ բան, աթոռն ինքն իրեն ցատկում է մի կողմ, եւ հանկարծ, ապշահար կոնցեսիոներների աչքի առաջ, գետնի տակն անցնում:

- Մամա՛,- գոռում է Իպոլիտ Մատվեեւիչը՝ թռչելով դեպի պատը, չնայած ինքը նույնիսկ նվազագույն ցանկություն չուներ նման բան անելու:

Ապակիները զնգզնգոցով կոտրվում են, քամին հափշտակում է «Ես ուզում եմ Պոդկոլեսինին» մակագրությամբ անձրեւանոցը եւ թռցնում պատուհանից դուրս՝ դեպի ծովը: Օստապը պառկել էր հատակին՝ թեթեւ սեղմված բարակ տախտակների կտորներով:

Ժամը գիշերվա տասներկուսն անց էր տասնչորս րոպե: Դա 1927 թ. Ղրիմի խոշոր երկրաշարժի առաջին հարվածն էր: Ինը բալանոց հարվածը, որն ամբողջ թերակղզուն անհաշվելի վնասներ պատճառեց, խլեց գանձը կոնցեսիոներների ձեռքից:

- Ընկե՛ր Բենդեռ, սա ի՞նչ բան է,- սարսափահար բղավում էր Իպոլիտ Մատվեեւիչը:

Օստապն իր տեղը չէր գտնում: Երկրաշարժ, որը կանգնել էր իր ճանապարհին: Սա նրա հարուստ գործունեության մեջ առաջին դեպքն էր:

- Ի՞նչ է սա,- գոռում էր Վորոբյանինովը:

Փողոցից լսվում էին ճիչեր, զնգզնգոցի ու շշուկների ձայներ:

- Մենք պետք է անհապաղ փախչենք փողոց, քանի պատը շուռ չի եկել մեզ վրա: Արա՛գ, արա՛գ: Տվե՛ք ձեր ձեռքը, գլխարկը...

Հատված Իլֆի եւ Պետրովի «12 աթոռ» գրքից

Իհարկե, աղետի մասին տեղեկությունները միայն այս գրքով չեն սահմանափակվում, ու կան բազմաթիվ փաստեր, որոնք դուրս են մնացել գրքի շրջանակներից:

Սկսենք նրանից, որ 1927 թ. Ղրիմի թերակղզում տեղի է ունեցել ոչ թե մեկ, այլ մի քանի երկրաշարժ: Առաջին անգամ հողն այնտեղ ցնցվել է հունիսի 26-ին, ապա՝ 29-ին: Ցնցումները զգալի էին, մոտավորապես 7 բալի սահմաններում, բայց, բարեբախտաբար, խոշոր ավերածություններ ու մարդկային զոհեր չեղան: Սակայն գրանցված ցնցումները բավականաչափ թուլացրեցին թերակղզու՝ առանց այն էլ ոչ այնքան ամուր շենքերն ու շինությունները: Ահա թե ինչու նույն տարվա սեպտեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը տեղի ունեցած 8-9 բալ ուժգնությամբ երկրաշարժը մի ակնթարթում ավերակների վերածեց Ղրիմի թերակղզու հարավային ափը:

Պարտենիտում ամբողջությամբ փլուզվում են այնտեղ գտնվող բոլոր 64 շինությունները: Միսխորում եղած 125 շենքից կանգուն է մնում միայն 2 տուն, մնացածն ամբողջովին կամ մասամբ փլուզվում են: Կորեիզում չկար գեթ մեկ անվնաս մնացած տուն: Յալթայի եւ դրան հարակից ավաններում ապրող մարդկանց գրեթե կեսը մնացել էր անօթեւան: Աղետի հետեւանքով զոհվում է 16, վնասվածքներ ստանում՝ 800 մարդ: Ընդ որում՝ մարդկանց մի մասի մահվան պատճառ է դառնում ոչ թե երկրաշարժը, այլ դրա հանդեպ ունեցած ահավոր վախը, որը ստիպում էր մարդկանց դուրս նետվել պատուհաններից կամ հասցնում էր սրտային անբավարարության: Հայտնի է նույնիսկ ինքնասպանության մեկ դեպք, երբ մարդը վախից վերջ էր տվել կյանքին՝ կախվելով: Երկրաշարժից հետո շատերը սարսափից բառացիորեն խելագարվում էին: Աղետից անմիջապես հետո հատուկ բժշկական հանձնաժողով են ուղարկում Ղրիմ՝ տեղի բնակիչների հոգեկան վիճակն ուսումնասիրելու համար: Իսկ այնտեղ խելագարվելու համար իսկապես բավական լուրջ պատճառներ կային:

Ահա թե ինչպես է այդ մղձավանջային գիշերվա իրադարձությունները նկարագրում այդ օրերին Յալթայում գտնվող գիտնական Ն. Ի. Կելյինը. «Ամպրոպից հետո բնությունը չափազանց հանդարտ էր: Քնած քաղաքի լռությունը խախտում էր միայն ափին հարվածող ծովի փոքր ալիքների ձայնը: Հանկարծ մի սարսափելի դղրդոց լսվեց, որի խուլ ձայնը, կարծես, գնում էր դեպի լեռները: Լույսերը մարեցին: Ամբողջ քաղաքում միակ լուսատուն լուսինն էր, որն այդ պահին գորշ-մոխրագույն լույս էր արձակում, հենց այնպիսին, ինչպիսին դիտվում է լուսնի խավարման ժամանակ: Չդադարող դղրդոցի ֆոնին լսվեց ուժեղ չրխկոց՝ ասես հսկայական, չոր ոսկորներ էին ջարդվում... Շենքերն սկսում էին փլուզվել... Բնակիչների վախն այնքան մեծ էր, որ առաջին իսկ ցնցումից հետո շենքերի բացված պատուհաններից սկսեցին բարձրաձայն հառաչանքներ ու ճիչեր լսվել: Խուճապային տրամադրությանը նպաստում էր նաեւ կենդանիների պահվածքը: Ամբողջ քաղաքի շները հավաքվել էին միասին, ոհմակներ կազմել եւ, մթությունից դուրս պրծնելով, ոռնում էին ու աղեկտուր կլանչում: Շների ձայնը, խառնվելով մարդկային ամբոխից հնչող հուսահատության ճիչերին, ավելի էր ուժեղացնում այդ չարագուշակ տպավորությունը»:



Հաջորդ օրն արդեն բոլոր կայարանները լեփ-լեցուն էին: Գնացքի տոմսի համար մարդիկ աստղաբաշխական գումարներ էին առաջարկում: Ղրիմը շտապում էին լքել ոչ միայն այնտեղ իրենց հանգիստն անցկացնող զբոսաշրջիկները, այլեւ՝ տեղի բնակիչները: Նրանցից շատերն այնքան ահաբեկված էին, որ այլեւս երբեք Ղրիմ չվերադարձան:

Հողը շարունակում էր ճոճվել ու դղրդալ: Թույլ ցնցումները շարունակվում էին մինչեւ նոյեմբեր: Թերակղզում մնացած մարդիկ շարունակում էին ապրել սարսափի մթնոլորտում: Իր հիշողություններն է պատմում Ալուշտայի մի բնակիչ. «Մարդկանց նյարդերը ծայրահեղ լարված էին: Գրեթե կենդանական վախով համակված մարդիկ լքել էին իրենց տներն ու համարյա մինչեւ խոր ձմեռ ապրում էին փողոցներում: Եթե տնից ինչ-որ բան էր պետք վերցնել, ապա այնտեղ էին սողոսկում գողերի նման՝ գաղտագողի ու վախեցած ականջ դնելով ցանկացած շշուկի: Դատարկ տեղում մարդիկ ֆաներաներից մի ամբողջ քաղաք էին սարքել, որը մենք կատակով անվանում էինք Ռիո դե Ֆանեյրո: Քաղաքի բնակիչները վախենում էին, որ Ղրիմը կարող է գետնի տակ անցնել»:

Հետաքրքիր է, որ երկրաշարժը ոչ բոլորին էր վախեցրել: 1927 թ. սեպտեմբերին Ղրիմում՝ իր ընկերոջ տանը հանգստացող նկարիչ Կ. Ս. Պետրով-Վոդկինն այդ աղետն ընդունեց որպես հազվագյուտ հաջողություն: Բանն այն է, որ Կուզմա Սերգեեւիչին շատ էր հետաքրքրում այն ամենը, ինչ կապված էր բնական աղետների ու երկրակեղեւի հատկությունների հետ: Նա Ղրիմ էր եկել կնոջ եւ փոքրիկ դստեր հետ: Հետագայում նրա կինը պատմում էր, որ այն ժամանակ, երբ բոլորը մտածում էին միայն թերակղզին լքելու մասին, նկարիչն ասել է, որ իրենք մնալու են այնտեղ. «Ես պետք է աշխատեմ: Սա այնպիսի իրադարձություն է, որը կարող է մեր կյանքում այլեւս երբեք չկրկնվել: Եթե մեզ վիճակված է մահանալ, ապա մենք կմեռնենք բոլորս միասին»: Նկարիչն իր ընտանիքով Ղրիմում է մնում մինչեւ հոկտեմբերի 10-ը, իսկ մի քանի ամիս անց ավարտում է «Երկրաշարժը Ղրիմում» կտավը, որը, կարելի է ասել, նկարված էր բնօրինակից:

Վերադառնալով այն տարիներին երկրաշարժի նկարներով լույս տեսած բացիկներին՝ նշենք, որ դրանց տպագրման նպատակը մարդկանց վախեցնելը չէր, այլ՝ երկրաշարժից տուժածներին օգնելը: Յուրաքանչյուր բացիկի դարձերեսին գրված էր. «Ամեն ինչ տուժած Ղրիմին օգնելու համար»: Դրանց վաճառքից գոյացած հասույթը հատկացվում էր նոր բնակարաններ կառուցելուն, մարդկանց համար հագուստ ու պարեն գնելուն եւ վնասված շենքերը վերանորոգելուն:

Ամենահամեստ հաշվարկներով՝ երկրաշարժը Ղրիմի թերակղզուն շուրջ 35 միլիոն ռուբլու վնաս էր պատճառել:

արտակարգ ժամանց

Ամանորը եւ աշխարհը

Թվում է, թե ի՛նչ նոր բան կարելի է իմանալ այս տոնի մասին: Բայց աշխարհի տարբեր երկրներում գոյություն ունեն բազմաթիվ հետաքրքիր փաստեր եւ սովորույթներ, որոնք անհրաժեշտ է իմանալ:

• Եղեւնի զարդարելու ավանդույթը գալիս է XVII դարի առաջին կեսից: Մերօրյա զանազան խաղալիքներին փոխարինում էին թղթից պատրաստված վարդերը, խնձորները, քաղցրավենիքը:

• 1895 թ. ԱՄՆ-ի Սպիտակ տան եղեւնին առաջին անգամ զարդարվում է էլեկտրական գունավոր լույսերով:

• Կուբայում նոր տարվա նախաշեմին տան ամանեղենը լցնում են ջրով, իսկ կեսգիշերին դուրս թափում պատուհանից՝ այդկերպ մաքրելով մեղքերը: Նոր տարին Կուբայում անվանում են արքաների օր:

• Իտալիայում գոյություն ունի անսովոր եւ տարօրինակ մի ավանդույթ: Նոր տարվա գիշերը իտալացիները դուրս են շպրտում տան հին իրերը: Դրանք կարող են լինել ե՛ւ հագուստ, ե՛ւ սպասք, ե՛ւ կահույք: Ըստ այս սովորույթի՝ որքան շատ են դուրս շպրտված հին իրերը, այնքան մեծ հաջողություն եւ հարստություն կարող է բերել նոր տարին:

• Դանիացիները կեսգիշերին սեղանին են դնում բրնձե քաղցր շիլա: Շիլայի առանձնահատկությունն այն է, որ նրա մեջ թաքնված է ընկույզ կամ նուշ: Այս ավանդույթը հատկապես դուր է գալիս չամուսնացած աղջիկներին: Եթե նրանցից որեւէ մեկին բաժին հասնի ընկույզ, ապա նոր տարում ամուսնությունից խուսափել այլեւս չի լինի: Ամուսնացածների համար շիլայի անակնկալը խոստանում է պարզապես հաջող տարի:

• 1843 թ. Լոնդոնում է «լույս աշխարհ» եկել ամանորյա առաջին բացիկը: Հենց այդտեղից էլ սկիզբ է առել շնորհավորական բացիկներ փոխանակելու ավանդույթը:

• Հնդկաստանում նոր տարին նշելու համար 8 ամսաթիվ-գոյություն ունի, քանի որ այդ երկրում տարբեր մշակույթներ են խաչվում: Հնդկաստանի հարավում նոր տարին նշվում է մարտին, հյուսիսում՝ ապրիլին, Քերալ նահանգամ՝ հուլիսին կամ օգոստոսին:

• Ավստրիայում ամանորյա կերպարների կողքին է նաեւ երջանկության թռչունը, որը մեծ ճանաչում ունի տեղացիների մոտ: Հետեւաբար, բնակիչների տոնական սեղանին չեք կարող գտնել որեւէ թռչնի մսից պատրաստված ուտեստ:

• Հարավային երկրներում, որտեղ չկան ո՛չ ձյուն, ո՛չ ցուրտ, ստիպված են «ստեղծել» իրենց կերպարներին: Օրինակ՝ Կամբոջայում մեծ ճանաչում ունի Տապ պապիկը:

• Համարվում է, որ դեկտեմբերի 30-ի երազը կարող է հուշել հաջորդ տարին ձեզ համար:

• Շոտլանդիայում նոր տարվա առաջին օրը կտրականապես արգելվում է ամուսնության առաջարկ անել եւ աղբը տնից դուրս հանել:

• Իսպանիայում նոր տարվա գիշերը ժամացույցի զարկերի հետ պետք է հասցնել ուտել խաղողի 12 հատիկ:

• Բուլղարիայում Ամանորի գիշերը երեք րոպե անջատվում են բոլոր լույսերը: Հենց այդ երեք րոպեի ընթացքում յուրաքանչյուրը կարող է համբուրել ում ցանկանա, եւ միայն գիշերն այդ մասին կիմանա:

• Աշխարհում ամենամեծ արհեստական տոնածառն ունեցել է 76 մետր բարձրություն եւ գտնվել է Բրազիլիայում:

• Անգլիայի բնակիչները կեսգիշերին՝ ժամացույցի վերջին զարկերի հետ, բացում են տան ետեւի կողմի դռները՝ հին տարին դուրս բերելու համար, եւ բացում են մուտքի դուռը՝ նոր տարին ներս թողնելու համար: Երեխաները քնելուց առաջ Սանտա Կլաուսի նվերների համար ափսե են դնում, իսկ կոշիկի մեջ խոտ՝ նրա ավանակի համար:

• Գերմանիան իր յուրահատուկ ավանդույթը ունի. հենց որ սլաքները սկսում են կեսգիշերն ազդարարել, տարբեր տարիքի մարդիկ բարձրանում են սեղանի, աթոռների, բազկաթոռների վրա եւ ուրախ բացականչություններով, ժամացույցի վերջին զարկի հետ «ցատկում» նոր տարի:

• Ֆրանսիայում մարդիկ կարող են նվիրել միմյանց ամեն ինչ, չնայած կան որոշակի կանոններ: Օրինակ՝ օծանելիք կարող է նվիրել միայն ամուսինը իր կնոջը: Այլ տղամարդուց նմանօրինակ նվերը համարվում է «կանոններից դուրս»:

• Ֆրանսիայում Ձմեռ պապը, կամ, ինչպես իրենք են անվանում՝ Պեր Նոելը, նոր տարվա գիշերը հյուր է գալիս երեխաներին եւ նվերներ է թողնում նրանց կոշիկներում: Ամանորյա թխվածքի մեջ ընդունված է տեղադրել լոբու հատիկ: Նա, ով իր թխվածքի մեջ գտնում է այդ լոբու հատիկը, ստանում է «լոբու արքա» անվանումը: Ամանորի գիշերը բոլորը պետք է կատարեն նրա հրամանները:

• Ճապոնիայում ամանորի գիշերը զանգերը 108 անգամ են խփում: Դրանցից յուրաքանչյուրը համապատասխանում է մեկ չարիքի: Չարիքները ընդամենը վեցն են՝ ժլատությունը, հիմարությունը, բարկությունը, թեթեւամտությունը, անվճռականությունն ու նախանձը, սակայն դրանցից յուրաքանչյուրն ունի 18 տարբեր երանգներ: Դրանց գումարն էլ հենց հավասար է 108-ի:



Նախորդ համարի խաչբառի պատասխանները

	Ա	Մ	Ի	Գ	Ո		Ժ		Բ		Բ
Ա		Ա		Լ		Ն	Ա	Տ	Ա	Շ	Ա
Մ	Ա	Ր	Մ	Ա	Ջ		Մ	Ո	Լ	Ո	Ր
Ր		Տ	Ա	Ն	Ի	Ք		Կ	Ո	Ն	Դ
Ո	Ճ	Ի	Ր		Վ	Ի	Պ	Ա	Կ		Ի
Ց		Կ	Ա	Յ	Ա	Ն	Ա	Լ		Հ	
	Գ		Թ		Ն	Ո	Ր		Կ	Ա	Վ
Շ	Ո	Ղ	Ո	Մ		Տ	Ի	Չ	Ի	Ն	Ա
	Մ	Ա	Ն	Ր	Է		Կ	Ա	Պ	ՈՒ	Ր
Դ	Ե	Զ		Ր		Գ		Մ	Ա	Ր	Ո
	Շ		Ճ	Ի	Պ	Ո	Տ		Ր		Ս
Ն		Ն	Ի	Կ	Ո	Լ	Ա	Յ		Թ	
Ո	Ր	Ո	Ր		Պ		Պ	Ա	Տ	Ի	Վ
Դ		Բ	Ա	Տ	ՈՒ	Տ		Ս	Ո	Մ	Ա
Ա	Մ	Ե	Ն	ՈՒ	Ր		Խ	Ո	Տ	Ո	Ր
Ր		Լ		Շ	Ի	Կ		Ն	Ո	Ր	Ք

§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦ß³µ³Ã³Ã»ñÃÇ ÑÇÙÝ³¹Çñ` §²ñï³Ï³ñ·³ÉÇù¦êàÀ

Ðñ³ï³ñ³ÏÇã`²ÆÜ Ö·Ý³Ã³Ù³ÏÇÝ Ï³é³í³ñÙ³Ý å»ï³Ï³Ý ³Ï³¹»ÙÇ³ àà²Î

ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É ²í³. º÷ñ»Ùï³Ý Ò»ð³íáñáÕ Ð³ëÙÇÏ²µ»Éï³Ý

º ñ»ð³Ý, ²×³éï³Ý 1 Ð»é. 010 31 77 20, 060 44 02 30 E - mail: info@mes.am

î å³·ñí³Í¿§îÇ·ñ³Ý Ø»Í¦ÑñÃ³ï³ñ³ÏãáõÃï³Ý ï å³ñ³ÝáõÙ`²ñß³ÏáõÝï³ó 2 Ì³í³ÉÁ`2 ï å³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ ä³ï í»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý ïÏ³ï³Ï³Ý`1074, ï å³ï³Ý³ÏÁ`3757 ÙñÇÝ³Ï: Ստորագրված է տպագրության 11.12.2014 թ.